

Արցախի Համար Աղօթք

Ողորմած Տէր, կու գանք քու առջեւ խոնարհ բայց հաստատամիտ հոգիով, խնդրելով քու շնորհքդ ու ողորմութիւնդ այս դժուար եւ կարիքաւոր պահուն: Ինչպէս, որ դուն լսեցիր Թագուհի Եսթերի պաղատանքին, այսօր մե՛նք ալ կ'աղաչենք, որ ականջալուր ըլլաս մեր աղօթքներուն:

Մեր սրտերը ծանր են մտահոգուած ըլլալով Արցախի ժողովուրդով, որոնք անսահման տառապանքներու եւ դժուարութիւններու կը տոկան: Կ'աղօթենք քեզ, Տէր, զօրացուր զիրենք իրենց պայքարին մէջ, տալով իրենց ուժ եւ տոկունութիւն, իրենց փորձութեանց մէջ: Մխիթարէ զիրենք իրենց ցաւերուն եւ կսկիծի մէջ:

Մենք կը պաղատինք Արցախի ժողովուրդին քու Աստուածային պահպանութեանդ համար: Պաշտպանէ գանոնք ամէն վնասէ, չարիքէ եւ բռնակալական յարձակումներէ եւ շրջապատէ զիրենք քու գրկախառն սիրովդ: Տեղացուր քու շնորհքդ հինաւուրց մեր Արցախի հողին վրայ, որպէսզի անոնք ապահովութիւն եւ խաղաղութիւն գտնեն:

Ով Տէր, մենք կը գիտակցինք մեր մարդկային սահմանափակ ըլլալուն, բայց մենք կը վստահինք քու անսահման իմաստութեանդ եւ կարողութեանդ: Առաջնորդէ՛ մեր ջանքերը, որպէսզի թեթեւնայ տառապանքը անոնց, որոնք ազդուած են այս մարդասիրական տագնապէն: Ներշնչէ ազգերն ու ղեկավարները, որպէսզի միասնաբար աշխատին հետապնդելու արդարութիւնն ու խաղաղութիւնը մեր ժողովուրդին համար: Կակուղցուր սրտերը բոլոր չարագործներուն եւ անարդարներուն, որպէսզի գիտակցին իւրաքանչիւր մարդկային կեանքի արժէքին եւ ողջունեն հաշտութեան ճանապարհը:

Կ'աղօթենք ով Տէր, այս տագնապի աւարտին համար: Թող քու արդարութիւնն ու բարեպաշտութիւնը տիրէ մեր նախահայրերու հողին վրայ: Վերահաստատէ համերաշխութիւնն ու միութիւնը բոլոր ժողովուրդներու միջեւ, որպէսզի անոնք կողք կողքի ապրին խաղաղութեան ու փոխադարձ յարգանքի մէջ: Թող քու ճշմարտութեան լոյսը փայլի պայծառօրէն, վանելով ատելութեան խաւարն ու բաժանումը:

Մենք խոնարհաբար կը հայցենք բարեխօսութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորչին, Ս. Մարիամ Աստուածածնին եւ բոլոր սուրբերուն: Թող անոնց աղօթքներն ու կեանքի օրինակները ոգեշնչեն մեզ ըլլալու գործարարները բուժման ու հաշտութեան: Շնորհէ մեզ կարեկցութիւն, ձեռք երկարելու անոնց, որոնք կարիքը ունին օգնութեան, եւ իմաստութիւնը՝ պաշտպանելու արդարութիւնն ու խաղաղութիւնը:

Քու անսահման ողորմութեանը մէջ, լսէ մեր աղօթքները, Ով Տէր: Կը մատուցենք այս խնդրանքները վստահութեան սրտով, գիտնալով որ դու՛ն ողորմած եւ սիրող Աստուած ես: Թող քու՛ կամքդ ըլլայ եւ թող քու՛ խաղաղութիւնդ տիրէ Արցախի եւ ամբողջ աշխարհի մէջ: Եւ քեզ կը մատուցենք փառք եւ պատիւ, հիմա եւ միշտ եւ յաւիտենապէս. ամէն: